ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Տիգրան Գաբրիելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	2019թ. սեպտեմբերի 25-27-ը Նիդերլանդների Թագավորություն
4.	Հրավիրող կողմը	ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանություն
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Հայաստանի կաթնարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված հարցերը քննարկելու նպատակով աշխատաժովին
6.	Քննարկված թեմաները	- Հայաստանի կաթնարդյունաբերության ոլորտի հնարավորությունները նույնականացնելու նպատակով իրականացված ուսումնասիրության արդյունքների քննարկում, -կաթնարդյունաբերության բնագավառի զարգացմանն ուղղված ներդրումների ներգրավման հնարավորությունների բացահայտում:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Կայացել են այցելություններ կաթնարդյունաբերության զարգացման բնագավառում բազմամյա միջազգային փորձ ունեցող «Բլես Դեյրիս» ընկերություն, ֆերմերային տնտեսություններ, պանրի արտադրությամբ զբաղվող փոքր և միջին ձեռնարկություններ, ինչպես նաև կաթի վերամշակմամբ զբաղվող ժամանակակից ընտանեկան տնտեսություն: Բացի այդ այց է կատարվել նաև «Միլկկոնտրոլ» լաբորատորիա, որն իրենից ներկայացնում է 500 անդամից կազմված կոոպերատիվ:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Նիդերլանդների Թագավորության դեսպանության գյուղատնտեսական խորհրդական Մեուս Բրուերինի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել վերապատրաստաման, մասնագիտական կարողությունների զարգացման և փորձի փոխանակման նպատակով՝ ՀՀ-ում կաթնարդյունաբերությամբ զբաղվող 10 մասնագետի Նիդերլանդերի Թագավորություն գործուղելու ուղղությամբ: Բացի այդ, պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագայում պետական մակարդակով Հայաստանի

		Հանրապետության հետ ագրոլորտում (անասնաբուծություն, կաթնարտադրություն, բուսաբուծություն) համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում երկկողմ փաստաթղթեր չեն ստորագրվել:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Կաթնարդյունաբերության և հարակից ոլորտները ներկայացնող շուրջ երեք տասնյակ խոշոր հոլանդական ընկերությունների մասնակցությամբ գործարար սեմինարի ընթացքում ներկայացվել է կաթնարդյունաբերության ոլորտի, գյուղատնտեսության բնագավառում պետական քաղաքականության և պետական օժանդակության ծրագրերի խթանման մասին և այն, որ ՀՀ-ում կաթնարդյունաբերությունը հանդիսանում է գյուղատնտեսության առանցքային ոլորտներից մեկը՝ հոլանդական գործարարներին առաջարկվել է ներդրումներ կատարել ՀՀ-ում, հավաստիացնելով, որ Հայաստանի աշխարհագրական դիրքն ու աշխարհաքաղաքական իրավիճակը լուրջ հեռանկարներ են բացում հոլանդացի գործարարների համար, ինչպես գործունեություն ծավալելու, այնպես էլ ՀՀ-ի միջոցով ԵՏՄ շուկա մուտք գործելու ուղղությամբ:
10.	Գործուղվողները	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	30.09.2019,